Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի <<Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ –ի պատմության (Հայոց եկեղեցու պատմության 12 դասաժամ, պատմության 3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար : Մրցույթն անցակացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցակացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում) ,
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստթղթերն ընդունվում են **հունվարի 19-ից մինչև փետրվարի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10 : 00-ից 14 : 00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 4-ին ՝ ժամը 10 : 00-ին**, ՀՀ Արարատի մարզի Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Այգեզարդ, Մաշտոցի 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 59-22-43 հեռախոսահամարով: